

<https://doi.org/10.59982/18294359-25.1-lr-16>

Լիլիթ Ռոմիկի Աբրահամյան

բ.գ.թ., դոցենտ
ՀԵՀ, Կիրառական լեզվաբանության ամբիոն
lilit-abrahamyan9@rambler.ru

Շարմաղ Ռոմիկի Աբրահամյան

բ.գ.թ., դոցենտ
ԲՊՀ, Անգլերենի հաղորդակցման ամբիոն
abrahamyansharmagh@yandex.com

Անահիտ Միքայելի Մկրտչյան

Ուսանող
ԲՊՀ, Լեզվաբանության և մանկավարժության ֆակուլտետ
mkrtchyan_a2003@mail.ru

Միլենա Ալիկի Դալլաքյան

Ուսանող
ԲՊՀ, Լեզվաբանության և մանկավարժության ֆակուլտետ
dallaqyanm9@gmail.com

Ամփոփագիր

Հարկ է նշել, որ դարձվածային միավորների նկատմամբ մի շարք լեզվաբանների հետաքրքրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դարձվածաբանությունը համեմատաբար նոր լեզվաբանական գիտակարգ է: Ընդ որում, հարկ է նշել, որ նշյալ ոլորտում մշտապես իրականացվել են և դեռ շարունակաբար իրականացվում են զուգադրական բնույթի բազում աշխատանքներ, քանի որ, մշակույթների լայն բազմազանությունից ելնելով, դարի հրամայականն է համարվում հասկանալ լեզվակրին՝ սույնով խուսափելով թյուրըմբռնումից:

Խիստ կարևորում ենք ընդգծել, որ դարձվածային միավորների համակողմանի ուսումնասիրությունը մեծ նշանակություն ունի թարգմանաբանական խնդիրների լուծման գործընթացում, քանի որ թարգմանություն կատարելիս հաճախ ի հայտ են գալիս այնպիսի խնդիրներ, որոնց լուծումը լեզվամշակութային առանձնահատկությունների մանրակրկիտ ուսումնասիրություն և վերլուծություն է պահանջում: Ինչպես գիտենք, դարձվածային միավորները յուրաքանչյուր լեզվում իրենց լեզվամշակութային առանձնահատկություններն ունեն:

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ուշագրավ է այն փաստը, որ լեզվամշակութաբանությունը մշակութային արժեհամակարգի համակարգային նկարագրմանն է նպատակաուղղված: Առկա է միտում՝ դիտարկելու լեզվամշակութաբանությունը միջմշակութային հաղորդակցության խնդիրներին զուգահեռ: Ընդ որում, լեզվաբանությանը և ազգային լեզվամտածողությանը հարող միջմշակութային առնչությունները, որոնք լեզվամշակութաբանության ուշադրության առանցքակետում են, ամենացայտուն կերպով իրենց արտահայտումն են գտնում տարատեսակ դարձվածային միավորների կիրառման շնորհիվ:

Սույն հոդվածում հանգամանալից քննության են առնվում «սիրտ» բաղադրիչով մի շարք դարձվածային միավորներ և՛ անգլերենում, և՛ հայերենում: Ավելին, նպատակահարմար ենք գտնում առաջադրել քննարկման ենթակա դարձվածային միավորների իմաստային դասակարգումը, ինչպես նաև նշյալ դարձվածային միավորներն անգլերենից հայերեն կամ հայերենից անգլերեն թարգմանելիս վեր հանված իմաստային համարժեքության գաղափարը:

Հիմնաբառեր: Դարձվածային միավոր, բացարձակ համարժեք դարձվածային միավոր, մասնակի համարժեք դարձվածային միավոր, իմաստային դասակարգում, լեզվամշակույթ:

Ներածություն

Հոդվածի նպատակն է վեր հանել «սիրտ» բաղադրիչով դարձվածային միավորների իմաստային առանձնահատկությունները և լեզվամշակութային տարբերությունները հայերենում և անգլերենում:

Հարկ է նշել, որ բոլոր լեզուներում կան այնպիսի դարձվածային միավորներ, որոնք հատուկ են միմիայն տվյալ լեզուներին: Այն է՝ քննարկման ենթակա դարձվածային միավորներն արտացոլում են նշյալ լեզվակիրների լեզվամտածողությունը, հոգեկերտվածքը, կենսափորձը և մշակութային արժեհամակարգը:

Հոդվածի արդիականությունն ակնհայտ է դառնում հատկապես թարգմանաբանական խնդիրներին առնչվելիս: Մեկ լեզվից մյուս լեզու բառացիորեն թարգմանելիս հաճախ կորչում է դարձվածային միավորների ոճական յուրահատկությունը, ուստի, անհրաժեշտություն է առաջանում կիրառել նշյալ դարձվածային միավորների համարժեք տարբերակները:

Սույն հոդվածի սկզբնամասում ներկայացվում են դարձվածային միավորների տարաբնույթ սահմանումները: Անդրադարձ է կատարվում նաև ԴՄ-ների կարևորությանը:

Սույն հետազոտության տեսական նշանակությունն այն է, որ «սիրտ» բաղադրիչով դարձվածային միավորների զուգադրական վերլուծությունը հայերենում և անգլերենում կարող է հետագա, նորանոր տեսական հարցադրումների նյութ ծառայել դարձվածաբանության համար:

Կիրառելով **զուգադրական, նկարագրական և վերլուծական մեթոդները՝** գործնական հատվածում վերլուծության ենք ենթարկում հայերենում և անգլերենում «սիրտ» բաղադրիչով ԴՄ-ները: Արդյունքում, բացահայտվում են հանրության լեզվական գիտակցության և ազգային մտածողության յուրահատկությունները:

Սույն ուսումնասիրության **գործնական արժեքն** այն է, որ հետազոտության արդյունքները կարող են կիրառվել բառագիտության, դարձվածաբանության, ինչպես նաև լեզվամշակութաբանության դասընթացների և սեմինարների ժամանակ:

ԴՄ-ները (դարձվածային միավորներ) լեզվակիր հանրության պատկերավոր մտածողության և գեղարվեստական արտահայտչամիջոցների կիրառման արգասիքն են: Հուզարտահայտչական երանգավորմամբ օժտված ԴՄ-ները հարստացնում են լեզուն, «համուիտ» պարզևում խոսքին: Դարձվածքներն արտացոլում են ազգի մշակույթը, սովորույթներն ու կենցաղը: Դրանք կարող են տարբեր իրավիճակներ և իմաստներ մատնանշել: Դարձվածքը պատճենված է հունարեն «στροφή»(strophe) բառից, որի նախնական իմաստն է «*ոլորք, գալար*»: Դարձվածքը կառուցվածքով երկու և ավելի բառերի կայուն, իմաստով ամբողջական և այնպիսի վերաիմաստավորված կապակցություն է, որը վերարտադրվում է խոսքում՝ որպես պատրաստի լեզվական միավոր: Ժամանակակից հայերենում դարձվածքը հաճախ անվանում են դարձվածային միավոր, դարձվածային արտահայտություն, որոշ դեպքերում նաև՝ իդիոմատիկ արտահայտություն: Գ. Անտրուշինան նշում է, որ ԴՄ-ները լեզվի բառապաշարի ամենագունեղ և արտահայտչական միավորներից են: Լեզվաբանական գրականության մեջ միասնական կարծիք չկա դարձվածքի կամ դարձվածային միավորների տարբերակման, դարձվածաբանության ընդգրկման սահմանների վերաբերյալ: Դարձվածաբանության լայն ըմբռնման կողմնակիցները դարձվածքների մեջ առանձնացնում են առածները, ասացվածքները, թևավոր խոսքերը, բարդ հարադրական շաղկապները, բառակապակցական եզրույթները, մինչդեռ դարձվածաբանության նեղ ըմբռնման կողմնակիցները հրաժարվում են վերոնշյալից և դարձվածքներ են համարում միայն իդիոմատիկ արտահայտությունները [Антрошина]:

Իր հերթին, Ս. Փինքերը վկայում է, որ «մեր հիշողության մեջ առկա են նույնքան կարծրացած արտահայտություններ, որքան բառեր կան» [Pinker]:

Հատկանշական է այն փաստը, որ տարբեր լեզվաբաններ տեսակետներ են արտահայտել դարձվածքների վերաբերյալ.

Ըստ Հ. Պետրոսյանի՝ դարձվածքները, որոնք ժողովրդական լեզվամտածողության արդյունք են, ձևավորվում են հիմնականում խոսակցական լեզվում, ապա՝ աստիճանաբար թափանցում գրական լեզու: Դրանք խոսքի ռճավորման կարևորագույն միջոց են որոնց կազմավորման հիմքում այլևայլ՝ հոգեբանական, տրամաբանական գործոններ են, ինչպես, օրինակ՝ նմանակումը, համեմատությունը, առընթերության զուգորդումը, չափազանցումը, տարամիտումը, հակադրումը և այլն» [Պետրոսյան]:

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Պ.Բեդիրյանը «Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն» աշխատության մեջ նշում է ԴՄ-ի հետևյալ առանձնահատկությունները.

1. ԴՄ-ն ամենից առաջ բառակապակցություն է, որի բաղադրիչներն առանձին բառերի արժեք ունեն:
2. ԴՄ-ն օժտված է կայունությամբ: Պ.Բեդիրյանը նշում է, որ կայունությունը դրսևորվում է հնչերանգային, բառային, իմաստային, ձևաբանական, շարահյուսական, կառուցվածքային և գործառական մակարդակներում:
3. Դարձվածքը կառուցվածքայնորեն անբաժանելի է: Նշյալ հատկանիշն է տարբերակում դարձվածքն ազատ կապակցությունից:

Այսպիսով, Պ. Բեդիրյանը ԴՄ-ն սահմանում է հետևյալ կերպ. «ԴՄ-ն բառերի կայուն, պատրաստի, վերարտադրելի, վերաիմաստավորված կապակցություն է, որի բաղադրիչ տարրերի ինքնուրույնությունը ձևական է, մինչդեռ շարահյուսական կապը՝ մթագնած» [Բեդիրյան]:

Դիտարկենք մեկ այլ լեզվաբանի՝ դարձվածքի լայն ըմբռնման կողմնակից Ա. Մուրվալյանի տեսակետը: «Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն» աշխատության մեջ Ա. Մուրվալյանը քննում է հայոց լեզվի դարձվածքների հին և նոր շերտերը: Ինչպես փաստում է Ա. Մուրվալյանը՝ «դարձվածքային առանձնահատուկ արտահայտությունների և սովորական արտահայտությունների միջև հաճախ դժվար է որոշակի սահման դնել, ուստի տվյալ միավորներն ընդհանուր առմամբ կոչվում են դարձվածքներ, ինչպես, օրինակ՝ *«հինգ մայրի պես իմանալ, կարկրի պես վրա տալ»*: Մանրամասն խոսելով դարձվածքների մասին՝ լեզվաբանը գրում է. «*Լեզվին աղ ու համ տվողը դարձվածքներն են, որոնք դարձնում են խոսքը արտահայտիչ, պատկերավոր, ազդեցիկ և դիպուկ*»: Ըստ նրա՝ լինելով աշխարհի ամենահարուստ լեզուներից մեկը՝ հայոց լեզուն բովանդակում է դարձվածքների անհուն ծով՝ երեք տասնյակ հազարից ավելի դարձվածքներ [Մուրվալյան]:

Ինչպես նշում է Ե.Գևորգյանը՝ «Ամեն կայուն բառակապակցություն դարձվածք չէ, սակայն ամեն դարձվածք կայուն բառակապակցություն է» [Գևորգյան]:

Արժեքավոր է Ա. Սուքիասյանի և Ս. Գալստյանի ներդրումը հայոց լեզվի դարձվածաբանության տեսության, ինչպես նաև դարձվածաբանական բառարան ստեղծելու հարցում: Ելնելով դարձվածքների իմաստից ու ձևից, ինչպես նաև վերջիններիս բաղադրիչների իմաստային կապերից՝ Ա.Սուքիասյանը և Ս.Գալստյանը դարձվածքները բաժանում են չորս խմբի՝ դարձվածաբանական միակցություն, դարձվածաբանական միասնություն, դարձվածաբանական կապակցություն և դարձվածաբանական արտահայտություն [Սուքիասյան, Գալստյան]:

Խ. Բաղիկյանը իրականացրել է արդի հայերենի ԴՄ-ների իմաստաբանական և քերականական դասակարգում, տրամադրել է ԴՄ-ների կառուցվածքային կաղապարները՝ ըստ բաղադրիչների քանակի և իմաստային փոխհարաբերության, քննել անվանական, բայական և հաղորդակցական ԴՄ-ները, դրանց բաղադրիչների քերականական կարգերը, ամբողջական կառույցների ձևաբանական

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

առանձնահատկություններն ու շարահյուսական գործառույթները: Առաջնորդվելով համաժամանակյա քննության մեթոդով՝ հեղինակը բառերին հարաբերակից կամ ոչ հաղորդակցական ԴՄ-ների շարքում տարբերում է գոյականական, ածականական, բայական, մակբայական և եղանակավորող ԴՄ-ներ [Բաղիկյան]:

Անդրադառնալով ժամանակակից հայերենում դարձվածքների համեմատության խնդրին՝ Լ.Ավետիսյանը նշել է, որ լեզվի դարձվածային կազմի մեջ առանձնակի տեղ ունեն համեմատական ԴՄ-ները՝ որպես պատրաստի վերարտադրելի կառույցներ [Ավետիսյան]:

«Հայերենի, ռուսերենի և անգլերենի սոմատիկ բաղադրիչներով համարժեք դարձվածքները» աշխատության մեջ Հ.Ղազարյանը ուսումնասիրել է սոմատիկ դարձվածքները՝ իրականացնելով տարբեր լեզուներում դարձվածաբանական համակարգերի զուգորդական ուսումնասիրություններ [Ղազարյան]:

Այսպիսով, դարձվածքի ընդհանուր իմաստի և դարձվածքի բաղադրիչ բառերի միջև գոյություն ունեցող հարաբերության տեսակետից՝ հայերենում դարձվածքները բաժանվում են չորս խմբի՝ դարձվածային սերտաճում, դարձվածային միասնություն, դարձվածային կապակցություն և դարձվածային արտահայտություն:

Անդրադառնալով *"heart"* և *«սիրտ»* բառերի ծագմանը՝ հարկ է նշել, որ անգլերենում *"heart"* բառը սերում է գոթական *"hairto"* բառից, մինչդեռ հայերենում այն առաջացել է հնդեվրոպական *"k'erd"*- *«սիրտ»* արմատից [Աճառյան]:

Ինչ վերաբերում է բառարանային սահմանումներին, ապա փաստենք, որ *"heart"* գոյականին անգլերենում տրվել են հետևյալ սահմանումները.

1. the organ in one's chest that sends the blood around one's body,
2. the part of the body from which feelings or emotions are considered to stem,
3. the central or the most important part,
4. courage, determination or hope
5. a shape, consisting of two circles next to each other at the top and a "V" shape at the bottom, often colored pink or red and used to represent love [Cambridge Dictionary].

«Սիրտ» բառը հայերենում ունի հետևյալ տասնյոթ նշանակությունները.

1. արյան շրջանառության կենտրոնական համակարգը մարդու և կենդանիների մարմնում
2. այդ համակարգի տեղը մարդու կրծքավանդակում և վերջինիս ծախ կողմը,
3. այդ համակարգը՝ որպես մարդկային զգացմունքների, ապրումների խորհրդանիշ,
4. սույն համակարգը՝ որպես սիրո խորհրդանիշ,
5. տվյալ համակարգը՝ որպես խղճի, բարության և հոգատարության խորհրդանիշ,
6. նշյալ համակարգը՝ որպես մտածելու և զգալու հիմնական խորհրդանիշ
- 7.(փխբ.) ընդերք, խորք, 8.(փխբ.) հիմնական՝ գլխավոր մասը, կենտրոնը,
- 9.(փխբ.) կարևորագույն նշանակություն ունեցող տեղը՝ հատվածը, բնագավառը և այլն,

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

- 10.(փխբ.) մարդու հոգեկան աշխարհը՝ զգացմունքները, տրամադրությունը, ապրումները,
- 11.(փխբ.) միջուկ, 12.(փխնն.) մարդ, անձնավորություն,
- 13.(փխբ.) որևէ տարածության միջակայքը՝ կենտրոնը,
- 14.(փխբ.) քաջություն, խիզախություն, անվեհերություն,
15. խաղաթղթի սրտածև կարմիր նիշը, սրտիկը,
16. գործածվում է կապական դերով՝ ներսը, ներսում, մեջը մատնանշելու համար [Աղայան]:

Բառի իմաստային դաշտում համընկնում են անգլերենում ունեցած վեց նշանակություններից հինգը, մինչդեռ հայերենն աչքի է ընկնում ուղիղ և փոխաբերական իմաստների բազմազանությամբ:

Իմաստային և քերականական նմանությունների և տարբերությունների հիման վրա՝ «սիրտ» բաղադրիչով անգլերեն և հայերեն ԴՄ-ները դասակարգվում են հետևյալ խմբերում.

1) Հոմանիշ դարձվածքներ.

որոշ դարձվածքներ անգլերենում և հայերենում նման իմաստներ են արտահայտում: Դիտարկենք հետևյալ օրինակները.

1. սիրտը տեղից դուրս է թռչում/սիրտը պայթում է - heart skips a beat/ (one's) heart is jumping out of (one's) chest - 1) Ծայրահեղ զայրույթի մեջ լինել, 2) անհանգստանալ, 3) ահաբեկվել, ահուդողի մեջ ընկնել:

2. սրտին մոտ ընդունել - take to heart - 1) ազդվել, վիրավորվել, 2) ծանր տանել

3. ձեռքը սրտին դրած - with your hand on your heart - 1) խղճին չդավաճանելով, 2) հավաստիացնելով այս կամ այն երևույթի ճշմարտացիությունը

4. սիրտս կանգնեց - my heart sank - 1) սաստիկ հուզվել, անհանգստանալ

2) Հակառակ դարձվածքներ.

Հայերենին և անգլերենին բնորոշ են նաև հակառակ դարձվածքներ: Օրինակ՝

1. ոսկի սիրտ ունենալ - have a heart of gold - շատ բարի, կամեցող, հարեհաս, առատաձեռն լինել

2. քար սիրտ ունենալ - have a heart of stone - ժլատ անողորմ, սառնասիրտ լինել,

3) Հոդով և անհոդ կիրառություններ.

Հոդով կամ առանց հոդի կիրառվելով՝ որոշ դարձվածքներ կարող են փոխել իրենց իմաստը: Դիտարկենք հետևյալ օրինակները.

1. սիրտ տալ - give heart to someone - քաջալերել, հուսադրել,

2. սիրտը տալ - give your heart to someone - անձնագոհություն անել

4) Բայական դարձվածքներ.

Հայերենում շատ են բայերով կազմված դարձվածքները: Ուշագրավ է նաև այն փաստը, որ մի շարք բայեր հիմնականում հենց դարձվածքներում են օգտագործվում:

1. սիրտը ուտել - eat one's heart out - ծանր վիշտ, տառապանք պատճառել,

2. սիրտը կոտրել - break someone's heart - տխրություն, վիշտ պատճառել

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

3. սիրտ չունենալ - have no heart to do something - տրամադրություն չունենալ մի բան անելու, հակված չլինել ինչ-որ բան անելուն [Նազարյան]:

5) Հոլովական վերջավորություններով դարձվածքներ.

Կան տարբեր հոլովական վերջավորություններով կազմվող դարձվածքներ: Մի քանիսը ներկայացնենք ստորև՝

1. սրտում առյուծ ծնվել (*ուռնե*րգոյական հոլով) - իրեն ուժեղ և անպարտելի զգալ, արիանալ,

2. սրտի լարերին դիպչել (*ի*-սեռական հոլով) - հուզել, մեկի նվիրական զգացմունքներին դիպչել,

3. սրտին դանակ խփել (*ին*-տրական հոլով) - նեղացնել, խոր ցավ պատճառել [Զահուկյան]:

6) Հարկ է նշել, որ անգլերենում հաճախադեպ են կապերով ձևավորված դարձվածքները.

1. after one's own heart - նույն կարծիքը, արժեքներն ունենալ

2. from the bottom of one's heart - ի խորոց սրտի

3. by heart - անգիր

Որոշ դարձվածային միավորներ կիրառում ենք առօրյայում՝ ոչ պաշտոնական հանդիպումների ժամանակ.

1. սիրտը մի մատ եղ կապել - գոհանալ, գոհունակությունից իրեն լավ զգալ, փառավորվել,

2. սրտի հատոր - հոգեհարազատ ու սիրելի մարդ,

3. սիրտը կաչել - հավանել, դուր գալ

4. սիրտը փորն ընկնել - ահաբեկվել, երկյուղի մատնվել

Անգլերենում ունենք հետևյալ խոսակցական դարձվածային միավորները.

1. cross your heart and hope to die - երդվել, որ ճիշտ ես,

2. bare one's heart - գաղտնիքները խոստովանել,

3. heart's desire - սրտի ուզածը:

Հոդվածի այս բաժնում զուգադրական վերլուծության ենթարկենք «սիրտ» բաղադրիչով անգլերեն և հայերեն ԴՄ-ներն իմաստաբանական տեսանկյունից:

Ելնելով ԴՄ-ներ բնութագրող այնպիսի կարևոր հատկանիշներից, ինչպիսիք են ներքին ձևը և նկարագրական տարրերը՝ «սիրտ» բաղադրիչով անգլերեն և հայերեն ԴՄ-ները դասակարգել ենք հետևյալ կերպ՝

1. Բացարձակ համարժեքներ

Այս խմբում ներառված ԴՄ-ները **նույնական** են *ներքին ձևով* և **հարաբերակից**՝ նկարագրական տարրերով:

Ձեռքը սրտին դրած - with your hand on your heart,

ոսկի սիրտ ունենալ - have a heart of gold,

քար սիրտ ունենալ - have a heart of stone,

սիրտ տալ - give heart to someone,

սիրտը տալ - give one's heart to someone,
սիրտը ուտել - eat one's heart out,
սիրտը կոտրել - break someone's heart,
սիրտ չունենալ - not have the heart to do something,
սրտի ուզածը - heart's desire

2. Մասնակի համարժեքներ

Այս խմբում ներառվել են այն ԴՄ-ները, որոնց ներքին ձևերը մասնակիորեն նույնական են կամ նույնական չեն, իսկ հարաբերակից նկարագրական տարրերի միջև իմաստային հարաբերություն է առկա՝

Սիրտը տեղից դուրս է թռչում - heart is jumping out of one's chest,
ի խորոց սրտի - from the bottom of one's heart,
հայացքների փոփոխություն - change of heart,
վհատվել - lose heart.

Կան մի շարք ԴՄ-ներ, որոնք ծագման հետաքրքրաշարժ պատմություն ունեն։ Օրինակ, *"with all one's heart"* - «ամբողջ սրտով» դարձվածքը ծագել է տասնվեցերորդ դարում։ Այն առաջին անգամ հայտնի դարձավ Զ. Սվիֆթի *"Polite conversation in three dialogues"* աշխատության շնորհիվ [Jonathan]: *"One's heart bleeds for someone"* դարձվածքը, որի հայերեն համարժեքն է «սրտիցս արյուն է կաթում», ծագել է 1300-ական թվականներին։ Սույն դարձվածքը ենթադրում է «դժվարությունների մեջ գտնվող մարդու հանդեպ ցավ զգալ» իմաստը։ *"Your heart sinks into your boots"* - «հանկարծակի հուսալքվել, տխրել» իմաստով դարձվածքի շնորհիվ առաջացել է անգլերենի *"heartsink"* ածականը։

Այսպիսով, դարձվածային միավորները, որոնք լեզվի արտահայտչականության և պատկերավորման լավագույն միջոցներից են, հանդես են գալիս թե՛ գրավոր, և թե՛ բանավոր խոսքում։ Դարձվածային միավորները, որոնք խոսքը ոճավորելու հրաշալի միջոցներ են՝ «խոսքի աղն ու համեմունքը», դրսևորվում են բոլոր տեսակի ոճերում։ Իմաստային նրբերանգների շնորհիվ դարձվածային միավորները դիպուկություն և կենդանություն են պարգևում մտքին՝ ասելիքը ներկայացնելով այլաբանորեն։ «Սիրտ» բաղադրիչով կազմված դարձվածային միավորները և՛ նմանություններ, և՛ տարբերություններ ունեն հայերենում և անգլերենում։

Եզրակացություն

Ամփոփելով անգլերենում և հայերենում «սիրտ» բաղադրիչով կազմված ԴՄ-ների շուրջ սույն ուսումնասիրության արդյունքները՝ եկել ենք հետևյալ եզրահանգումների.

1. «Սիրտ» բաղադրիչով ԴՄ-ներն անգլո-հայկական լեզվամշակույթում իրականության կարգայնացման լեզվական միջոցներից են։

2. Քննության առնված ԴՄ-ներն առավել գործածական են խոսակցական լեզվում, գեղարվեստական գրականության մեջ, ինչպես նաև լրագրային հոդվածներում։

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

3. «Սիրտ» բաղադրիչով ԴՄ-ներն անգլերենում և հայերենում աչքի են ընկնում հաճախադեպ կիրառմամբ. և՛ անգլալեզու, և՛ հայ գրականության մեջ «սիրտ» բաղադրիչը մեծամասամբ կիրառվում է փոխաբերական բառակապակցություններում:

4. «Սիրտ» և *"heart"* բաղադրիչներով քննության առնված ԴՄ-ներում առկա են միմիայն հայերենին կամ բացառապես անգլերենին հատուկ ԴՄ-ներ, ինչը վկայում է երկու հանրույթների լեզվամտածողության և կենսափիլիսոփայության տարբերությունների մասին:

5. Որպես կանոն՝ գերակշռում են բացարձակ համարժեք ԴՄ-ները: Հետևապես, նմանությունները գերիշխում են:

6. Հատկանշական է, որ հայկական լեզվամշակույթում կարևորագույն դեր ունի *«սիրտ»* բաղադրիչը, որը, ունենալով բազում իմաստներ (տասից ավելի), կիրառվում է մի շարք բնագավառներում և համատեքստերում: Նշյալ իրողությունը պայմանավորված է մարդկանց կյանքում *սիրտ* օրգանի կենսական նշանակությամբ:

Եզրափակելով՝ նշենք, որ *«սիրտ»* և *"heart"* բաղադրիչներով կազմված ԴՄ-ները ժողովրդախոսակցական ոճին բնորոշ բառային միավորներ են, անգլիացիների և հայ ժողովրդի լեզվամտածողությունն ու ազգային մտածողությունն արտահայտող լեզվական միջոցներ: Խնդրո առարկա ԴՄ-ներն արտացոլում են տվյալ ժողովրդի բարքերն ու սովորույթները, կենսակերպը, կենցաղը, ինչպես նաև հոգեկերտվածքն ու կենսափիլիսոփայությունը: Նշյալ ԴՄ-ներն արտացոլում են լեզվակրի արժեհամակարգի և մշակութային յուրահատկությունները:

Գրականության ցանկ

1. Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1976, 1615 էջ:
2. Աճառյան Հ., Հայերեն ստուգաբանական առձեռն բառարան, Մարտիրոս Մինասեան, Ժնև, 2004, 300 էջ:
3. Ավետիսյան Լ., Համեմատություն - դարձվածային միավորները ժամանակակից հայերենում, Ե., Էդիթ Պրինտ, 2018, 184 էջ (մենագրություն):
4. Բադիկյան Խ., Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, ԳԱ, 1986, 354 էջ:
5. Բեդիրյան Պ., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երևանի Պետական Համալսարանի Հրատարակչություն, Երևան, 2011, 1408 էջ:
6. Սուքիասյան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևանի Պետական Համալսարանի Հրատարակչություն, Երևան, 1975, 614 էջ:
7. Գևորգյան Ե., Հայերենի դարձվածքները, Երևանի Պետական Համալսարանի Հրատարակչություն, 1969, 136 էջ:
8. Ղազարյան Հ., Հայերենի, ռուսերենի և անգլերենի սոմատիկ բաղադրիչներով համարժեք դարձվածքները, ՀՀ ԳԱԱ հրատ., 2013, 91-104 էջեր:

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

9. Մուրվալյան Ա., Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայականություն, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1959., 251 էջ:
10. Նազարյան Ա., Անգլերեն դարձվածքների ուսումնական համառոտ բառարան, Ամարաս, Երևան, 1928, 218 էջ:
11. Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1987, 716 էջ:
12. Զահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, «Ասողիկ» Հրատարակչություն, Երևան, 2010, 820 էջ:
13. Антрушина Г., Лексикология английского языка, Дрофа, Москва, 2005, 247 с..
14. Cambridge Advanced Learner's Dictionary with CD-ROM, Cambridge University Press, 2008, 1632 p..
15. Jonathan S., “Polite conversation in three dialogues”, Alpha Edition, 2019, 222 p..
16. Pinker S., “The Language Instinct”, New York, NY, 1994, 483 p.

THE COMPARATIVE ANALYSIS OF PHRASEOLOGICAL UNITS WITH THE COMPONENT " HEART" IN ENGLISH AND ARMENIAN

Lilit Abrahamyan

PhD, Associate Professor

EUA, Chair of Applied Linguistics

lilit-abrahamyan9@rambler.ru

Sharmagh Abrahamyan

PhD, Associate Professor

BSU, Chair of English Communication

abrahamyansharmagh@yandex.com

Anahit Mkrtchyan

Student

BSU, Faculty of Linguistics and Pedagogy

mkrtchyan_a2003@mail.ru

Milena Dallaqyan

Student

BSU, Faculty of Linguistics and Pedagogy

dallaqyanm9@gmail.com

Abstract

It should be noted that the interest of many linguists in phraseological units stems from the fact that phraseology is a relatively new linguistic discipline. Moreover, numerous contrastive studies have been, and continue to be, conducted in this field. Given the wide variety of cultures,

understanding native speakers has become a crucial imperative of our time, helping to avoid misunderstandings.

We attach great importance to highlight that the comprehensive study of phraseological units is of paramount importance in the process of solving translation problems, since while doing translation, there are frequently such problems whose solution requires a thorough study and analysis of linguocultural peculiarities. As we know, phraseological units have their own linguocultural peculiarities in each language.

Remarkably, linguoculturology is aimed at the systematic description of the cultural value system. There is a tendency to view linguoculturology in parallel with the problems of intercultural communication. Furthermore, the intercultural relations concerning linguistics as well as the national linguomentality, which are in the limelight of linguoculturology, find their most vivid expression due to the use of various phraseological units.

Thus, it is worth mentioning that the current article examines in detail a number of phraseological units with the component "heart" in both English and Armenian. Moreover, we find it appropriate to propose a semantic classification of the phraseological units under discussion, as well as the idea of semantic equivalence raised when translating the aforementioned phraseological units from English to Armenian or from Armenian into English.

Thus, it is noteworthy that in the current article a number of phraseological units with the component "heart" are scrutinized both in English and Armenian. Moreover, we find it reasonable to bring forth the semantic classification of the phraseological units under discussion, as well as to touch upon the idea of semantic equivalence revealed in the process of the translation of the given phraseological units from English into Armenian and from Armenian into English.

Keywords: Phraseological unit, absolute phraseological equivalent, partial phraseological equivalent, semantic classification, lingoculture.

Ներկայացվել է՝ 10.04.2025թ.
Ուղարկվել է գրախոսման՝ 22.04.2025թ.